

**«ԱԳՐՈՐԲԻԶՆԵՍԻ և ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Հիմնադրամ
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին**

Գագիկ Սարգսյանից

«Ա. Երևան, Կոմիտաս 3/43, հեռ.՝ +374 93408014, էլ. փոստի հասցե՝
gagik.sardaryan@card.am,

**«ԱԳՐՈՐԲԻԶՆԵՍԻ և ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Հիմնադրամ
պետ գրանցման համար՝ 222.160.00390
Վկայական՝ 03 Ա 065375**

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ «ԱԳՐՈՐԲԻԶՆԵՍԻ և ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Հիմնադրամը
ընդգրկել «ԱԳՐՈՐԲԻԶՆԵՍԻ և ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» հասարակական խորհրդի կազմում:
Կից ներկայացնում եմք պահանջվող փաստաթղթերը.

1. Տնօրենի անձնագրի պատճենը
2. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ
3. Հետաքրքրվածության նամակ
4. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում «ԱԳՐՈՐԲԻԶՆԵՍԻ և ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամի գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝ Գ. Սարգսյան

<03> մայիսի 2016թ.


մայիսի 03, 2016թ.
թիվ 2016/05/07

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Ավելի քան տասը տարվա գործունեության ընթացքում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը հասցրել է իրականացնել մի շարք զարգացման ծրագրեր ՀՀ գյուղատնտեսության ոլորտում, ինչի արդյունքում քաջատեյակ է գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրներին և որոշակի ուղղություններով ունի զարգացման հստակ տեսլական: Հաշվի առնելով կատարված աշխատանքի ծավալներն ու հաջողությունը, ինչպես նաև ոլորտի մասնակիցների վստահությունը՝ 2016թ.-ի ապրիլի 3-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ստորագրեց համաձայնության հուշագիր CARD Հիմնադրամի հետ որը միտված է ընդլայնելու համատեղ գործունեության շրջանակը գյուղատնտեսության ոլորտում, այդ թվում՝ սննդամթերքի անվտանգությանը և գյուղական համայնքների համաչափ զարգացմանն աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով CARD հիմնադրամի ծավալած գործունեությունը և փորձը գյուղատնտեսության ոլորտում, ցանկություն ենք հայտնում ընդգրկվելու ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Հարգանքով,



Գագիկ Մարտիրոսյան
CARD հիմնադրամի տնօրեն

ՔԱՐԴ ՀԻՄՆԱԴՐԱՄ



Հայաստանում զբաղվածների մոտ 35%-ն ընդգրկված է գյուղատնտեսական արտադրության ոլորտում և ապահովում է համախառն ներքին արդյունքի 20%-ը (2014 թ.), հետևաբար գյուղատնտեսության համաչափ և սահուն զարգացումը տնտեսության զարգացման առաջնային ուղղություններից մեկն է: Հանրապետության տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ են ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար: Այդուհանդերձ, հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ագրարային հատվածում ստեղծված իրավիճակը, ծառայած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը, գյուղատնտեսական ճիշտ և արդյունավետ քաղաքականության կիրառությունը դառնում է առաջնային նշանակության խնդիր:

Համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության սահմանվում են գյուղատնտեսության ոլորտի հետևյալ գերակայությունները՝

- 1) Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարում և հակաճգնաժամային մեխանիզմների ներդրում,
- 2) Ագրարային բարեփոխումների խորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում,
- 3) Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում,
- 4) Տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության՝ ներմուծվող պարենամթերքի փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում,
- 5) Գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում,
- 6) Սննդամթերքի անվտանգության ապահովում,
- 7) Հողօգտագործման արդյունավետության բարձրացում,
- 8) Օրգանական գյուղատնտեսության զարգացում,
- 9) Բուսաբուծության զարգացում.
- 10) Անասնաբուծության զարգացում.
- 11) Գյուղատնտեսական հումքի վերամշակում.
- 12) Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում,
- 13) Գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացում,

- 14) Գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում,
- 15) Ագրարային ոլորտի վարկավորման բարելավում,
- 16) Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում,
- 17) Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում:

Ավելի քան տասը տարվա գործունեության ընթացքում ՔԱՐԴ Հիմնադրամը հասցրել է իրականացնել մի շարք զարգացման ծրագրեր ՀՀ գյուղատնտեսական ոլորտում, ինչի արդյունքում քաջատեղյակ է գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրներին և որոշակի ուղղություններով ունի զարգացման հստակ տեսլական: Հաշվի առնելով կատարված աշխատանքի ծավալներն ու հաջողությունը, ինչպես նաև ոլորտի մասնակիցների վստահությունը, 2016 Ապրիլի 3-ին ՀՀ ԳՆ-ը ստորագրեց համաձայնության հուշագիր ՔԱՐԴ Հիմնադրամի հետ որը միտված է ընդլայնելու համատեղ գործունեության շրջանակը գյուղատնտեսության ոլորտում, այդ թվում՝ սննդամթերքի անվտանգությանը և գյուղական համայնքների համաչափ զարգացմանն աջակցելու նպատակով:

Զարգացման ծրագրերի առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով ՔԱՐԴ հիմնադրամը պարբերաբար իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության իրավիճակի և միջազգային լավագույն փորձի վերլուծություն, որպեսզի առավելագույնի հասցնի իրականացվող ծրագրերի արդյունավետությունն ու ստեղծած արժեքները: Ուսումնասիրելով ՀՀ գյուղատնտեսության քաղաքականությունը ՔԱՐԴ Հիմնադրամը առաջ է քաշում հետևյալ զարգացումը զսպող սահմանափակումները՝

1) Փոքր տնտեսությունների գերակշռություն՝ համակցված թույլ համագործակցության հետ:

Հայաստանում շուկայի մի շարք կարևոր անկատարություններ զգալիորեն զսպում են գյուղարտադրության զարգացումը՝ սահմանափակելով գյուղարտադրողների բանակցային հնարավորությունները, աղճատելով գնագոյացման գործընթացն՝ ի վնաս գյուղարտադրողների, և ի վերջո նվազեցնելով տնտեսվարողների մոտ ներդրումներ կատարելու ձգտումը: Մասնավորապես գյուղական համայնքներում չկան պահեստավորման (և վերամշակման) բավարար կարողություններ, ինչը թույլ կտար կանխելու վնասները՝ արտադրանքը պահեստավորելով բերքահավաքի թեժ ժամանակ (սեզոնին) և վաճառելով բերքի սեզոնից դուրս: Փոքր արտադրողները չունենալով բերքը (խաղող, կաթ, ցորեն և այլն) հավաքելու և պահեստավորելու հնարավորություններ՝ հաճախ ստիպված են արտադրանքը վաճառել բերքահավաքի թեժ ժամանակ և, հետևաբար, ցածր գնով: Դա զգալիորեն կրճատում է արտադրողների եկամուտը: Շուկայի աշխատանքի վրա նկատելիորեն ազդում է սննդամթերքի անվտանգության և որակի ստանդարտների անարդյունավետությունը կամ բացակայությանը (և(կամ) առկա տանդարտների թերի ներդրումը, որի արդյունքում գնագոյացման ժամանակ քիչ ուշադրություն է դարձվում արտադրանքի անվտանգությանը և որակի կարևոր ցուցանիշներին: Շուկայի աշխատանքը տուժում է փոքր թվով խոշոր վերամշակող գործարանների կողմից իրենց դիրքի չարաշահումին (օրինակ հատկապես՝ ցորենի և խաղողի մթերման և վերամշակման ոլորտներում), որոնք գներ են թելադրում և կիրառում են մթերման կամ գնումների անարդյունավետ և գյուղարտադրողների համար դժվար ընթացակարգեր:

2) Մատակարարման շղթայի մասնակիցների գիտելիքների և հմտությունների պակաս,

Գյուղարտադրության և շուկայահանման շղթայի բոլոր փուլերում կա արդյունավետ տեխնոլոգիաների և գործելակերպերի վերաբերյալ գիտելիքի խիստ պակաս, ներառյալ՝ հողի մշակման, ագրարակի կառավարման, մշակաբույսերի կառավարման և կենդանիների խնամքի, բերքահավաքի և բերքահավաքից հետո արտադրանքի կառավարման, գյուղատնտեսական

ծառայությունների փուլերը: Գյուղարտադրության մեծ մասն, ըստ էության, ոչ մասնագիտական (ոչ պրոֆեսիոնալ) է: Դա հանգեցնում է ոչ արդյունավետ գործելակերպերի կիրառման, հետևաբար՝ ցածր արտադրողականության և ցածր որակի: Գիտելիքների պակասը բացասաբար է ազդում ներդրումների ինչպես ծավալի, այնպես էլ որակի վրա: Գյուղատնտեսությունում դեռևս գործում են շատ հնացած և ոչ արդյունավետ գործելակերպեր: Գիտելիքների փոխանցումն ավելի է բարդանում գյուղատնտեսության հատվածային լինելու պատճառով: Նմանապես, գիտելիքի և հմտությունների պակաս է զգացվում պետական մարմինների շրջանում, ներառյալ՝ քաղաքականության և պետական աջակցության միջոցների, կանոնակարգերի և ստանդարտների մշակման և ներդրման, նպատակների սահմանման և դրանց համար ֆինանսական միջոցների բաշխման հարցերում: Արդյունքում՝ շուկայի մասնակիցների շրջանում հաճախ աղճատվում են խթաններն ու շարժառիթները, ինչը նվազեցնում է գործ (բիզնես) դնելու և զարգացնելու և ներդրումներ կատարելու ձգտումը տնտեսվարողների շրջանում:

3) Ներդրումների ցածր մակարդակ գյուղատնտեսության ոլորտում (ներառյալ՝ տեխնոլոգիաներում, ազարակներում, ծառայություններում, մեքենաների և սարքավորումների մեջ):

Ներդրումների ցածր մակարդակը հանգեցնում է բարձրակարգ գյուղատնտեսական ծառայությունների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների պակասի, ինչը զգալիորեն նվազեցնում է արտադրության և շուկայահանման ընդհանուր գործընթացի արդյունավետությունը: Գյուղատնտեսությունը կազմում է Հայաստանի ՀՆԱ մոտ 20%-ը: Վերջին երեք տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսերը չեն գերազանցում ընդհանուր ծախսերի մոտ 2.5% (ներառյալ պահուստային ֆոնդից հատկացումը): Բացարձակ արտահայտությամբ, գյուղատնտեսության ոլորտում պետական ծախսերը 2012-2014 թ.թ. կազմել են 25-32 մլրդ դրամ, որից ուղղակի սուբսիդավորման ծրագրերին ուղղվել է 8-12 մլրդ դրամ:

Դրանք հիմնականում ներդրանքի սուբսիդաներ են (պարարտանյութերի, դիզելային վառելիքի, վարկերի տոկոսավճարների և ոռոգման ծառայությունների մասնակի սուբսիդավորում): Պետական ծախսերի մի խոշոր հատված ուղղված է ոռոգման համակարգերի կառուցման ու հիմնանորոգման և պատվարների ու ջրամբարների հիմնանորոգման համար (հիմնականում են ֆինանսավորվել են միջազգային վարկային միջոցների հաշվին): Պետական միջոցներ են հատկացվում նաև ընդհանուր բնույթի զանազան ծառայությունների և խորհրդատվության համար, մասնավորապես, անասնաբուժության և անասնաբուծության, բույսերի պաշտպանության, հողերի բարելավման (հիմնականում հակահեղեղային և կոլեկտորադրենաժային աշխատանքներ) ծառայություններ, որոնք նույնպես կենտրոնանում են ներդրանքի վրա:

Ներդրումների ցածր մակարդակի հիմնական պատճառներից է ֆինանսական սահմանափակումները, այսինքն՝ գործ հիմնադրելու և զարգացնելու, ինչպես նաև կառավարության կողմից գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրերի իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների սակավությունը և դժվարամատչելիությունը: Այնուամենայնիվ, դա միակ հիմնական պատճառը չէ: Մի շարք այլ սահմանափակումների համակցությունը, ինչպիսիք են տնտեսությունների փոքրությունը և դրանց միջև թույլ համագործակցությունը, գիտելիքների և հմտությունների պակասը, շուկայի ենթակառուցվածքի և աշխատանքի անկատարությունները և կառավարության ոչ արդյունավետ քաղաքականությունը և աջակցությունը բերում են ոլորտում ներդրումների ցածր շահագրգռության և պահանջարկի: Կենսունակ գործարար գաղափարների պակասն ավելի մեծ է, քան ֆինանսական միջոցների: Տարիներ շարունակ սերմացուին, դիզ վառելիքին և պարարտանյութերին տրվող սուբսիդիաները ուղղված են հիմնականում միավորից վերարտադրողական ցածր մակարդակը պահելու: Այն ինչ զարգացած գյուղատնտեսություն

ունեցող երկրներում սուբսիդիաները ուղղված են եղել նոր տեխնոլոգիաների, սարքավորումների ու արտադրողականության բարձրացմանը:

4) Կառավարության վարած քաղաքականության, կանոնակարգման և աջակցության մեխանիզմների ոչ բավարար արդյունավետություն:

Վերջին երկու տասնամյակում Հայաստանի կառավարությունը իրականացրել է զգալի բարեփոխումներ և պետական աջակցության միջոցառումներ՝ գյուղատնտեսության և գյուղի զարգացման համար: Մի շարք կարևոր մթերքների մասով (ներառյալ՝ ցորենը և կաթը) որոշ չափով բարելավվել է պարենային ապահովությունը ըստ պետական վիճակագրության: Սակայն գյուղատնտեսության ոլորտի արտադրողականությունը դեռ անհամեմատ ցածր է: Մինչ օրս կիրառվող քաղաքականությունն ու բիզնես գործելակերպերը թույլ չեն տվել լուծել բերքահավաքի թեժ ժամանակ գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված մշտապես կրկնվող բարդությունները: Բացի այդ, դրանք նաև չէին կարող ապահովել արտադրողականության և առևտրայինացման ցանկալի մակարդակներ: Ցածր են արտադրողականությունը և արտադրանքի որակը, արդիականացման (մոդեռնացման) և առևտրայինացման մակարդակը, մրցունակությունը և եկամուտ ստեղծելու կարողությունը: Համեմատության համար՝ Հայաստանում ցորենի միջին բերքատվությունը մոտ 3 տոննա/հա է, իսկ Բելգիայում և Իռլանդիայում՝ 9 տոննա/հա, կովերի կաթնատվությունը ավելի քիչ է, քան 2 տոննա/կով, իսկ Ուկրաինայում և Իսրայելում, համապատասխանաբար, 4.5 տոննա/կով և 11 տոննա/կով: Հայաստանում խաղողի որակը ցածր է և թույլ չի տալիս արտադրել որակյալ գինի և մրցունակ լինել տեղական և արտաքին շուկաներում:

Ռազմավարության ու աջակցության միջոցների արդյունավետ մշակումը, դրանց նպատակայնությունը, իրականացումը և վերահսկումը պահանջում են պատշաճ տվյալների բազա և տեղեկատվական համակարգեր, ինչպես նաև կարող պետական հաստատություններ:

Գյուղատնտեսության նախարարությունը շարունակաբար քայլեր է կատարում կարողությունների զարգացման համար (օրինակ՝ վերջերս ստեղծվել է Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչություն), սակայն դեռ կա կարողությունների բարելավման զգալի կարիք՝ քաղաքականության արդյունավետ մշակման և իրականացման համար:

Հայաստանում տեղեկատվական ներկա համակարգերը թույլ չեն տալիս պետական աջակցության համար արդյունավետ կերպով ընտրելու «ճիշտ» շահառուներին, և իրականացնելու ծրագրերի կանոնավոր մոնիթորինգ ու գնահատում:

Տեղեկանք ծավալած գործունեության վերաբերյալ

CARD (Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն) հիմնադրամը ֆերմերային տնտեսությունների և ագրոբիզնեսի, գյուղական տարածքների զարգացման, սննդի անվտանգության, ֆինանսական ծառայությունների տրամադրման, գյուղատնտեսական և սննդի արտադրության, գյուղատնտեսական սարքավորումների և պարագաների մատակարարման ոլորտներում համալիր ծառայություններ տրամադրող կազմակերպություն է: Այն հիմնադրվել է 2005թ. ապրիլի 4-ին՝ որպես հայաստանյան հիմնադրամ, և հանդիսանում է ԱՄՆ Գյուղ. դեպարտամենտի Մարքեթինգի աջակցության ծրագրի (ԱՄՆ ԳԴ-ՄԱԾ) իրավահաջորդը, որը մոտ 22 տարի շարունակ հաջողությամբ գործել է Հայաստանում:

CARD հիմնադրամը աշխատում է գյուղական տարածքներում աղքատության նվազեցման ուղղությամբ՝ մշակելով ավելացված արժեքով արտադրանքի շղթա, որից օգուտ են քաղում՝ փոքր արտադրողները, վերամշակողները, մանրածախ առևտրով զբաղվողները, գյուղատնտեսական մթերք արտահանողները և սպառողները: Աշխատելով տվյալ շղթայում՝ մենք ինտեգրում ենք կայունության չորս ոլորտները՝ տնտեսական, ֆինանսական, տեխնիկական և սոցիալական:

Ունենալով ԱՄՆ Գյուղ. դեպարտամենտի (USDA), ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID), Ավստրիայի Զարգացման Գործակալության (ADA), Շվեյցարիայի Զարգացման Գործակալության (SDC) և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների շարունակական ֆինանսավորումը և աջակցությունը, ինչպես նաև մշտական սերտ համագործակցությունը ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության հետ՝ CARD հիմնադրամը նախագծում և իրականացնում է զարգացման և աջակցության ծրագրեր, որոնք հաջողությամբ ինտեգրվում են կառավարության գյուղատնտեսության զարգացման ռազմավարության մեջ: Տվյալ ծրագրերն ուղղված են կայուն աճ ապահովող հետևյալ առաջնային խնդիրներին՝

- ա) գյուղատնտեսական առաջադեմ տեխնոլոգիաների կիրառման խթանում,*
- բ) վերամշակման ոլորտի զարգացմանը և տեղական ու արտասահմանյան շուկաներում մրցունակ սննդամթերքի մշակում,*
- գ) արտադրության, վերամշակման և սպասարկման ոլորտներում սննդի որակի և անվտանգության աստիճանի բարձրացում,*
- դ) կենդանիների գենետիկական հատկանիշների, առողջության և անասնապահության պրակտիկայի բարելավում,*
- ե) նոր քաղաքականությունների և կանոնակարգերի հաստատում:*